ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ, «ԶԱՐԹՈՆՔ» ԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, «ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 184-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՎ ԴԻՄՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՆՇՎԱԾ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՐԱԿԻՑ ՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Հայաստան» դաշինքի, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, «Հայոց Հայրենիք» կուսակցության և «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» միավորված գործով դիմող «Հայաստան» դաշինքի ներկայացուցչի՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը նշված գործով դատավարությանը որպես հարակից պատասխանող ներգրավելու և տեղեկատվություն պահանջելու վերաբերյալ միջնորդությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. 2021 թվականի հուլիսի 7-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «Հայաստան» դաշինքի ներկայացուցչի միջնորդությունը՝ սույն միավորված գործով դատավարությանը որպես հարակից պատասխանող ՀՀ ազգային անվտանգության

ծառայությանը ներգրավելու և համապատասխան տեղեկատվություն պահանջելու վերաբերյալ:

Դիմողը նշում է, որ «Հայաստան» դաշինքի ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումը վերաբերում է տասներկու խումբ ընտրախախտումների, որոնք ուղղակիորեն առնչվում են տարբեր պետական մարմինների իրավասությանը և ներկայացված են դիմումի առանձին կետերում:

Դիմողի պնդմամբ սույն գործի քննության համար էական նշանակություն ունի հիշատակված մարմնից ընտրական գործընթացում վարչական ռեսուրսի կիրառման, զինծառայողների քվեարկությանը մասնակցության, ընտրությունների օրը Հայաստանի Հանրապետությունում չգտնվող քաղաքացիների և այլ ենթադրյալ ընտրախախտումների վերաբերյալ տեղեկատվությունը, որը Սահմանադրական դատարանը փաստացի չի պահանջել, իսկ արդեն իսկ պահանջված նյութերում դրանք չեն կարող ներառված լինել:

2. Սահմանադրական դատարանը նախ հարկ է համարում նշել, որ վերոհիշյալ միջնորդությանն անդրադառնում է միայն հարակից պատասխանող ներգրավելու մասով և, ըստ այդմ, ուսումնասիրելով միջնորդությունը, գտնում է, որ այդ մասով այն ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու կապակցությամբ՝ նաև գործով զեկուցող դատավորը Սահմանադրական դատարանի նախագահի գիտությամբ իրավասու են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու փաստաթղթեր, տեղեկություններ և այլ նյութեր, փորձաքննություններ, բացառությամբ իրավունքի հարցերով փորձաքննությունների, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ նրանց տրամադրության տակ գտնվող նյութեր:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ Սահմանադրական դատարանը կարող է որպես հարակից պատասխանող ներգրավել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնց որոշումները կամ գործողությունները կարող էին ներգործել ընտրու-

թյունների արդյունքների վրա, կամ որոնք պարտավոր էին (պարտավոր են) օրենքով սահմանված կարգով ապահովել և պաշտպանել ընտրական իրավունքները, բացառությամբ դատարանների:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումից բխում է, որ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճերի լուծման գործերով որպես հարակից պատասխանող ներգրավելու համար օրենսդիրը սահմանել է ներքոնշյալ երկու չափանիշները, որոնցից մեկի առկայությունն արդեն իսկ բավարար է համապատասխան մարմնին դատավարական կարգավիճակ շնորհելու համար, մասնավորապես.

1. անհրաժեշտ է, որ տվյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները կամ գործողությունները հնարավոր ներգործություն ունեցած լինեն ընտրությունների արդյունքների վրա, կամ

2. տվյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններն օրենքի ուժով կրում էին (կրում են) ընտրական իրավունքների ապահովման և պաշտպանության պարտավորություն:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմողը որևէ կերպ չի հիմնավորել որ միջնորդության շրջանակում վկայակոչված պետական մարմինը բավարարում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հարակից պատասխանողին ներկայացվելիք օրենսդրական պահանջները:

Որպես միջնորդության հիմնավորում՝ դիմողը նշում է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից որոշակի տեղեկատվություն ստանալու անհրաժեշտությունը, ինչը ենթադրում է այլ դատավարական ընթացակարգի կիրառում՝ առանց հարակից պատասխանողի դատավարական կարգավիճակի տրամադրման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 77-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Հայաստան» դաշինքի, «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, «Հայոց Հայրենիք» կուսակցության և «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքի դիմումների հիման վրա՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 184-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» միավորված գործով դիմող «Հայաստան» դաշինքի ներկայացուցչի կողմից ներկայացված՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը նշված գործով դատավարությանը որպես հարակից պատասխանող ներգրավելու վերաբերյալ միջնորդությունը մերժել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

8 հուլիսի 2021 թվականի
ՍԴԱՈ-147